Հաստատում եմ՝
ՀՀ ԳԱԱ Գիտակրթական
միջազգային
կենտրոնի տնօրեն՝
Ա. Սարգսյան

ՀՀ ԳԱԱ
ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ

Հաշվետվություն 2018

ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ հանրային կապերի և կարիերայի բաժնի

ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ հանրային կապերի և կարիերայի բաժինն ամփոփում է 2018 թ. գործունեությունը և ներկայացնում տարվա ընթացքում բաժնի կանոնադրությանը համապատասխան կատարված գործառույթներն ու միջոցառումները:

- Բաժինը տարին սկսում է Տավուշի մարզում բարեգործական մեծ ծրագրի իրականացմամբ, ինչպես նաև սահմանամերձ Նոյեմբերյան քաղաքի այցելությամբ, որտեղ պետական քոլեջի գրադարանին հանձնվեցին 400 կտոր մասնագիտական և գիտահանրամատչելի գրականություն: Հագուստի և սննդի մեծ կապոցներ հանձնվեցին նաև մարզի ամենաանապահով 20 ընտանիքներին:

- Ծաղկաձորում տեղի ունեցավ եռօրյա Ձմեռային դպրոցը, որտեղ կենտրոնի ուսանողները մասնակցեցին տարբեր գործնական դասընթացների՝ համատեղելով հանգիստն օգտակարի հետ:

- Բաժինը Կենտրոնի տարբեր բաժինների ուսանողների համար մշտապես կազմակերպում է այցելություններ համապատասխան ձեռնարկություններ և կազմակերպություններ:

  Տարին սկսվեց Արփիմեդ դեղարտադրող խոշորագույն կազմակերպության այցելությամբ, որտեղ դեղագետները կարողացան մանրամասն ծանոթանալ ընկերության արտադրությանը:

- Արդեն նախորդ տարիներին հիմք դրված ծրագիրն այս տարի ևս շարունակական բնույթ կրեց, որի ընթացքում կենտրոնի ուսանողներն այցելեցին Շող ցերեկային կենտրոն և կազմակերպեցին մեկշաբաթյա կրթական ծրագրեր կենտրոնի սաների համար:

- Մարտ ամսին կազմակերպվեց ամենամյա ինտելեկտուալ խաղ, որին մասնակցում էին կենտրոնի տարբեր բաժինների ուսանողները: Մրցույթն անցկացվեց 2 փուլով ՝ վերջում 5 մասնակից թիմերից ընտրելով ուժեղագույն թիմին:

- EducationUSA կրթական խորհրդատու Շուշաննա Աբովյանը և ԱՄՆ Պետքարտուղարության կողմից իրականացվող PFP մասնագիտական վերապատրաստման ծրագրի մասնակից Իռեն Դանիելյանը այցելեցին ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ ՝ ներկայացնելու ԱՄՆ-ում կրթություն ստանալու հնարավորությունները , հրապարակային ելույթների հմտությունները:

- ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ ուսանողները շարունակում են իրենց այցերը տարբեր արտադրություններ: Մարտի 30-ին «Կառավարում» մասնագիտության հեռակա և առկա ուսուցման մագիստրանտները «Արտադրական մենեջմենթ»-ի հերթական արտագնա դասաժամերը անցկացրին «ԲԵԿՈՆ ՊՐՈԴՈՒԿՏ» որակյալ մսամթերք արտադրող ընկերությունում:

- Հայաստանի երիտասարդական ակումբների դաշնության , տարբեր գործընկերի և ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի գիտակրթական միջազգային կենտրոնի հետ համատեղ հիմք դրվեց նոր ծրագրի,որը պետք է նպաստեր երիտասարդների աշխատանքի և ոչ ֆորմալ կրթության ճանաչմանը՝ հավաստագրված «Միջազգային երիտասարդական ուսումնասիրությունների» ուսումնական ծրագրերի (ինչպես նաև երիտասարդ աշխատողների համար հեռակա ուսուցման դասընթացների կազմակերպման) և Եվրոպական բարձրագույն ուսումնական հաստատությունների համար բաց կրթական նյութերի միջոցով:

- Ապրիլին ԳԿՄԿ ուսանողները հանդիպեցին Հայաստան ժամանած Լեհաստանի Դաբրովա Գուրնիչա համալսարանի Անվտանգության և ճգնաժամի կառավարման դեպարտամենտի ղեկավար Պաուլինա Պոլկոյի հետ, որը ներկայացրեց Դաբրովա Գուրնիչա համալսարանը, առաքելությունը, միջազգայնացման գործընթացը և մասնագիտությունները, ինչպես նաև տեղեկատվական պատերազմների տեսակներն ու դրանց հաղթահարման ձևերը:

- Ապրիլի 11-13-ը «Երևան Էքսպո» ցուցահանդեսային համալիրում կազմակերպվել էր «Կրթություն և կարիերա» էքսպո 2018 տասնութերորդ միջազգային մասնագիտացված ցուցահանդեսը: Ավանդույթ դարձած այս խոշորագույն միջոցառմանը բովանդակալից ծրագրերով և նախաձեռնություններով մասնակցեց նաև ՀՀ ԳԿՄԿ-ը՝ կարևորելով իր գործունեությունը մեր երկրի կրթական ոլորտի զարգացման գործընթացում:

- ապրիլի 20-ին բաժնի հետ համատեղ ՀՀ ԳԱԱ –ում պաշտոնապես մեկնարկեց Երիտասարդական ակումբների դաշնության և ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոնի համատեղ իրականացվող երկարաժամկետ միջազգային ծրագիրը՝ երիտասարդական աշխատանքի և ոչ ֆորմալ կրթության ճանաչելիության ուղղությամբ:

- մայիսին ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ հանրային կապերի և կարիերային բաժնի և արտաքին կապերի բաժնի նախաձեռնությամբ ԳԿՄԿ-ում տեղի ունեցավ համագործակցության համաձայնագրի հանդիսավոր ստորագրումը ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ-ի և Նովոսիբիրսկի պետական մանկավարժական համալսարանի միջև:

- ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոնի դասախոս Համո Սուքիասյանի և բաժնի նախաձեռնությամբ պատմության ինստիտուտի նիստերի դահլիճում կազմակերպվել էր հանդիպում «Հրանտ Դինք» հիմնադրամի ներկայացուցիչների հետ:

- ՀՀ ԳԱԱ նախագահության դահլիճում, ավանդույթ դարձած կերպով, տեղի ունեցավ դիպլոմների հանձնման պաշտոնական արարողությունը, որի ընթացքում ԳԿՄԿ վարչական աշխատողներն ու դասախոսներն իրենց ողջույնի և շնորհավորական խոսքերն ուղղեցին շրջանավարտներին:

- Կարևորելով կրթություն-աշխատաշուկա արդի փոխառնչությունները ՀՀ-ում, պահանջարկի ձևավորման առկա իրավիճակը աշխատաշուկայում, շրջանավարտների ինտերգման հարցերը նոր աշխատավայրում՝ ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ Շրջանավարտների հետ կապի և զբաղվածության բաժնի հրավերով ԳԿՄԿ ուսանողների հետ հանդիպեց ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար Մանե Թանդիլյանը:

- Կարևորելով երիտասարդության մասնակցությունը հանրային գործընթացներին և ուսանողների առավելագույն առնչությունը կրթական գործընթացներին ՝ կազմակերպվել էր ԳԿՄԿ համաուսանողական հավաք, որի ընթացքում ուսանողները հնարավորություն ունեցան բարձրաձայնել իրենց հուզող հարցերը, առաջարկները, ակնկալվող սպասելիքները:

- Ձեռներեցության համաշխարհային շաբաթվա (Global Entrepreneurship Week - GEW) 2018թ. միջոցառումների շրջանակում ԱՄՆ դեսպանատունը «Արմենիա Մարիոթ» հյուրանոցում իրականացրեց կարիերայի և ձեռնարկատիրության աջակցության 2018թ. ծրագիրը, որին մասնակցեց նաև ԳԿՄԿ-ն իր նոր առաջարկներով և հնարավորություններով:

- ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտում տեղի ունեցավ հանդիպում-քննարկում նվիրված պոլսահայ մտավորական «Ակոսի» թերթի խմբագրապետ Հրանտ Դինքի մահվան 12-րդ տարելիցին: Հանդիպման բանախոսներն էին՝ ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գիտաշխատող, պ.գ.թ. Արամ Սայիյանը և «Հրանտ Դինք» հիմնադրամի պատմության ծրագրերի համակարգող Վահագն Քեշիշյանը:

- «Դասավանդի՛ր, Հայաստան»-ի առաջնորդության զարգացման ծրագրի ներկայացուցիչները առանձին հանդիպումներ ունեցան յուրաքանչյուր բաժնի ուսանողների հետ ՝ ներկայացնելով իրենց առաջարկներն ու հնարավորությունները:

- Բաժինն ակտիվորեն մասնակցել է «Ինովացիոն հնարավորությունները և մարտահրավերները ժամանակակից աշխարհում» թեմայով միջազգային գիտաժողովի կազմակերպման նախապատրաստական աշխատանքներին, հոդվածների հավաքագրումներին և այլ անհրաժեշտ խնդիրների լուծմանը:

- FAST - Foundation for Armenian Science and Technology հիմնադրամի ճամփորդական դրամաշնորհների մրցույթի շրջանակներում կենտրոնում կազմակերպվեց հանդիպում հիմնադրամի ներկայացուցիչների հետ:

- Կարևորելով նաև կենտրոնի ուսանողների ժամանցը և պատմամշակութային վայրերի այցելությունների կարևորությունը՝ աշնանը ՌԻԽ-ի հետ համատեղ կազմակերպվեց էքսկուրսիա գունագեղ Դիլիջանում:

Բաժինն անչափ կարևորում է կենտրոնի ուսանողների համար տարբեր ոչ ֆորմալ դասընթացների կազմակերպումը:

- մարտի 13-24-ը անցկացվեց **«Տարածաշրջանային արդի հիմնախնդիրներ. մարտահրավերներ և հնարավորություններ»** խորագրով մասնագիտական դասընթացը, որին մասնակցեցին ԳԿՄԿ արևելագիտության, միջազգային հարաբերությունների, հանրային կառավարման և քաղաքագիտության կուրսերի ուսանողները, ինչպես նաև այլ բուհերի ուսանողներ և շրջանավարտներ:

- ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոնի Արևելագիտության ամբիոնի վարիչ՝ Ռ. Ղազարյանի հետ ս.թ. հուլիսի 9-13 տեղի ունեցավ **«Արդի տարածաշրջանային հիմնախնդիրներ. մարտահրավերներ և հնարավորություններ»** խորագրով մասնագիտական երկրորդ դպրոցը, որին մասնակցում էին Գիտակրթական միջազգային կենտրոնի ուսանողները և ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատությունների ուսանողները: Դասընթացի առաջին օրը ԳԿՄԿ-ում հյուրընկալվեցին պոլսահայ համայնքի ներկայացուցիչները:

- Տեղի ունեցավ **«Խորհրդարանական դիվանագիտություն»** խորագրով դպրոցը: Դպրոցի նպատակն էր ուսանողների և երիտասարդների մեջ քաղաքագիտության ոլորտի վերաբերյալ գիտելիքների ավելացումը, նրանց մասնակցության բարձրացումը հասարակական, քաղաքական տարբեր գործընթացներում:

- Նոյեմբերին ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կոնտրոնի Իրավագիտության ամբիոնի, հանրային կապերի և զբաղվածության բաժնի ու Ուսանողական գիտական ընկերության կողմից կազմակերպվեցին **«Ես գիտեմ իմ իրավունքները»** խորագրով մեկամսյա իրավաբանական դասընթացներ:

- նոյեմբերի 23 - դեկտեմբերի 1-ը Արևելագիտության ամբիոնի հետ համատեղտեղի ունեցավ**«Արդի տարածաշրջանային հիմնախնդիրներ. մարտահրավերներ և հնարավորություններ»** խորագրով մասնագիտական դասընթացների երրորդ հոսքը:

Բաժնի կողմից մշտապես իրականացվում է շրջանավարտների զբաղվածության տվյալների հավաքագրման և թվայնացման աշխատանքներ, որը հետագայում հիմք է ծառայում տարբեր գործատուների կողմից համապատասխան թափուր հաստիքների համալրման նպատակով:

ԳԿՄԿ բարձր համբավի ապահովման և հանրային կապերի ամրապնդման նպատակով՝ բաժինը մշտապես լուսաբանում է ԳԿՄԿ տարբեր միջոցառումներն ու ծրագրերը Կենտրոնի սոցիալական ցանցերում, պաշտոնական կայքում և ակտիվորեն համագործակցում է

տեղական բոլոր լրատվական միջոցների հետ՝ տրամադրելով տարբեր նյութեր, հարցազրույցներ՝ ինչպես նաև մասնակցում ռադիո և հեռոստահաղորդումների:
Հաշվետու տարում բաժնի կողմից պատրաստվել և պաշտոնական կայքում լուսաբանվել է ընդհանուր 47 տեղեկատվական նյութ, 5 տեսանյութ:
Մոտ 5 տասնյակ ԶԼՄ կայքերի կողմից լուսաբանվել են Կենտրոնի տարբեր միջոցառումներ և ծրագրեր: Բաժնի կազմակերպմամբ Կենտրոնի ներկայացուցիչները մասնակցել են 5 ռադիո և հեռուստահաղորդումների: